

երից կողմանց կամէին մտանել աշխարհն Լէ-
 ճայ: Բայց եւ Լէճքն լուեալ զգալուստ նոցա՝
 110 պատրաստեցան զօրք բազումք եւ զնացեալ
 կալան զանցս ճանապարհաց եւ սպասէին գալն
 Թագաւորին:

Եւ իբրեւ ետուն զԵսպանքն զգիրն ար-
 քային. զոր ընթերցեալ առաջի ամենեցուն՝
 115 զահի հարան եւ երկիւղիւ լցան, մինչեւ բե-
 կաւ սիրտն ամենայնի ահէ անօրինին. այլ եւ
 շիւարեալ յիմարեցան յանթիւ զօրացն որոց
 ոչ գոյր թիւ: Ապա ասէ բարեպաշտ արքայն.
 Մի՛ երկնչիք եւ մի զարհուրիք եւ մի յուսա-
 120 հատիք ի սպառնալեաց բռնաւորին. բայց մեք
 սպաւինեալ յԱստուած եւ ի զօրութիւն սուրբ
 Խաչին, զի նովաւ յաղթեսցուք թշնամեաց.
 Թէպէտ նոքա բազում են եւ անթիւ, այլ ան-
 հաւատք են. իսկ մեք (թէպէտ եւ) սակաւք եւ
 125 հաւատացեալք. զի զօրութեամբն Աստուծոյ
 եւ սուրբ Խաչին, որ նա անարգեաց, յաղթէ
 սակաւն բազմաց: Քանզի նամակս այս նման
 է գրոյն Ռաբսակայ զօրավարին, որ գրեաց առ
 բարեպաշտ արքայն Երուսաղէմի եւ Իսրայէ-
 130 լացոցն Եզեկիայ: Այլ եւ նման է գիրս այս
 օրինադրի սորա Մահմէտայ եւ Օմարայ գրոյն,
 որ գրեցին ի Կոստանդնուպօլիս առ աստուա-
 ծասէր կայսրն Յունաց մեծն Հերակլ: Ձի, ասէ,
 այս մարտ չէ ընդ մեզ կամ ընդ մարմնոյ, այլ
 135 ընդ անյաղթ զօրութիւնն Աստուծոյ. զի սա
 փրացեալ իբրեւ զտիկ ունայն՝ սկսաւ հայհոյել